ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի Կ-218-Ա ԵՎ Կ-219-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ *կարգադրում եմ.*

1. Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելու մասին» Կ-219-Ա կարգադրության 1-ին հավելվածում՝

1) 6-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով.

2) 7-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «4» թիվը փոխարինել «3» թվով.

3) «Իմ քայլը» խմբակցություն» տողի բառերը փոխարինել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով.

4) «Բարգավաճ» խմբակցություն» տողի բառերը փոխարինել «Հայաստան» խմբակցություն» բառերով.

5) «Լուսավոր Հայաստան» խմբակցություն» տողի բառերը փոխարինել «Պատիվ ունեմ» խմբակցություն» բառերով.

6) 14-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «4» թիվը փոխարինել «3» թվով և «Ընդամենը» տողի «15» թիվը փոխարինել «14» թվով.

7) 16-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «132» թիվը փոխարինել «107» թվով և «Ընդամենը» տողի «132» թիվը փոխարինել «107» թվով.

8) 20-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «5» թիվը փոխարինել «6» թվով և «Ընդամենը» տողի «19» թիվը փոխարինել «20» թվով.

9) 69-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «3» թիվը փոխարինել «4» թվով.

10) 71-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

11) 145-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «2» թիվը փոխարինել «3» թվով և «Ընդամենը» տողի «17» թիվը փոխարինել «18» թվով.

12) 158-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով.

13) 176-րդ կետից հետո լրացնել նոր՝ 176.1-րդ կետ.

176.1	Բուժքույր	Քաղաքացիական աշխատանք կատարող	1

14) 186-րդ կետի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «28» թիվը փոխարինել «31» թվով և «Ընդամենը» տողի «104» թիվը փոխարինել «109» թվով.

15) Վերջին «Ընդամենը» տողի «Հաստիքային միավորների թիվը» սյունակի «613» թիվը փոխարինել «594» թվով:

2. Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» Կ-218-Ա կարգադրության 1-ին հավելվածի՝

1) 2.2-րդ գլխում՝ լրացնել նոր 95.1-րդ կետ.

«95.1 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության հաշվապահության գլխավոր մասնագետ»:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

2021թ. օգոստոսի 3
Երևան
Կ-106-Ա